6 փետրվարի 2020 թվականի N 128 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1908-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սասունիկի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 1908-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 2-րդ կետի «ա» ենթակետում «149.2» թիվը փոխարինել «148.91» թվով.

2) N 2 հավելվածում՝

ա. «Գյուղատնտեսական» տողում «որից չմասնավորեցվող» սյունակի «106.04» թիվը փոխարինել «105.85» թվով,

բ. «Բնակավայրեր» տողում «որից չմասնավորեցվող» սյունակի «33.23» թիվը փոխարինել «33.06» թվով,

գ. «Ընդամենը» տողում «149.27» թիվը փոխարինել «148.91» թվով.

3) N 3 հավելվածի V սեկցիայի՝

ա. «97» եզրագծի համարով տողի «106.04» թիվը փոխարինել «105.85» թվով,

բ. «97» եզրագծի համարով տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով՝

«	97-01	0.19						,

գ. «Ընդամենը» տողում «67.99» թիվը փոխարինել «68.18» թվով, իսկ «163.92» թիվը՝ «163.73» թվով.

4) N 4 հավելվածի I սեկցիայի՝

ա. «11» եզրագծի համարով տողի «30.57» թիվը փոխարինել «30.40» թվով,

բ. «11» եզրագծի համարով տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով՝

«	11-01		0.17							արտ մաս ,

գ. «Ընդամենը» տողում «72.825» թիվը փոխարինել «72.655» թվով, իսկ «0.10» թիվը՝ «0.27» թվով,

դ. N 4 հավելվածի «Ընդամենը» տողում «81.715» թիվը փոխարինել «81.545» թվով, իսկ «62.36» թիվը՝ «62.53» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ. փետրվարի 10
Երևան